ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ
«ՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ
ԱՆԴԱՄ ՍԱՄՎԵԼ ՀԱԿՈԲՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Հակոբյան,

ի պատասխան Ձեր 09.02.2024թ. գրության՝ տեղեկացվում է.

Ավագանու անդամի պարտականությունների և ավագանու անդամի կողմից մեկ հերթական նստաշրջանի ընթացքում ավագանու նիստերի կամ քվեարկությունների ավելի քան կեսից կամ հանձնաժողովի նիստերի կեսից անհարգելի պատճառով բացակայության՝ որպես ավագանու անդամի լիազորությունների վաղաժամկետ դադարեցման հիմքի հետ կապված հարաբերությունները կարգավորված են «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 19-րդ և 20-րդ հոդվածներով:

Տեղեկացվում է նաև, որ «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի համաձայն՝ ավագանին գործում է իր կանոնակարգին համապատասխան՝ նիստերի, հանձնաժողովների, խմբակցությունների աշխատանքի միջոցով, որոնց գումարման, նիստերի անցկացման, դրանցում հարցերի քննարկման կարգը սահմանված է «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքով և Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված Երևան քաղաքի ավագանու կանոնակարգով:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ